ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Վրաստանի Հանրապետության կառավարության միջև վիզաների փոխադարձաբար ճանաչման մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Վրաստանի Հանրապետության կառավարությունը, այսուհետ՝ Կողմեր,

ղեկավարվելով բարեկամական, բարիդրացիական հարաբերությունները զարգացնելու և փոխադարձ անվտանգության ապահովմանը նպաստելու ցանկությամբ,

անհրաժեշտ համարելով բարենպաստ պայմաններ ստեղծել իրենց տարածքներ երրորդ պետությունների քաղաքացիություն չունեցող անձանց, այսուհետ՝ օտարերկրյա քաղաքացիներ, մուտքի, տեղաշարժման և ելքի համար,

ընդունելով, որ այդ նպատակներին հասնելու արդյունավետ միջոցներից մեկը Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության հյուպատոսական ծառայությունների համագործակցությունն ու օպերատիվ փոխգործունեությունն է,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Յուրաքանչյուր Կողմ ճանաչում է օտարերկրյա քաղաքացիների՝ Կողմերի իրավասու մարմինների կողմից տրված մուտքի, ելքի և տարանցիկ վիզաները: Կողմերից մեկի տարածք մուտք գործելու, մնալու և ելքի համար տրված հիշյալ վիզաները ունեցողներին իրավունք են տալիս անարգել կերպով տարանցիկ անցնել մյուս Կողմի տարածք՝ նշանակման վայր, կամ երրորդ երկիր՝ ելքի վայր:

Հոդված 2

Կողմերի տարածքներում ժամանակավորապես գտնվող օտարերկրյա քաղաքացիների մնալու և տեղաշարժման կարգը որոշվում է այդ Կողմերի ազգային օրենսդրությամբ:

Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի ժամանակավորապես սահմանափակել կամ կասեցնել իր տարածքով օտարերկրյա քաղաքացիների տարանցումը՝ մյուս Կողմին նախօրոք տեղեկացնելով ընդունված որոշումների մասին:

Հոդված 3

Կողմերը պարտավորվում են վիզաներ չտալ այն քաղաքացիներին, որոնց համար Կողմերի տարածք մուտքը փակ է Կողմերից յուրաքանչյուրի սահմանած կարգով: Կողմերը միջոցներ կձեռնարկեն նման անձանց հաշվառման կենտրոնացման և համապատասխան տեղեկության փոխանակման ուղղությամբ:

Այդ անձանց վիզա տրվելու դեպքում վիզա տված Կողմը երաշխավորում է, որ այդ անձանց իրավունք չի տրվի մուտք գործել մյուս Կողմի տարածք: Նման վիզաներում կարվի համապատասխան նշում՝ «մուտքը Հայաստանի Հանրապետություն փակ է» կամ «մուտքը Վրաստանի Հանրապետություն փակ է»:

Հոդված 4

Կողմերը կփոխանակեն տեղեկություն իրենց տարածքներում օտարերկրյա քաղաքացիների գտնվելու հետ կապված բոլոր հարցերով, այդ թվում՝ վիզաների ձևակերպման գործող կարգի, հյուպատոսական գանձումների սակագնի մասին, ինչպես նաև կփոխանակեն անձնագրային-վիզային փաստաթղթերի նմուշները:

Հոդված 5

Կողմերը միմյանց կտեղեկացնեն երրորդ պետությունների հետ մուտքի-ելքի հարցերով բոլոր համաձայնագրերի մասին:

Հոդված 6

Կողմերի համաձայնությամբ՝ սույն Համաձայնագրում կարող են արվել լրացումներ և փոփոխություններ:

Հոդված 7

Սույն Համաձայնագրի Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Համաձայնագրի գործողությունը, ինչի մասին նա պետք է ծանուցի մյուս Կողմին ոչ ուշ, քան դուրս գալու օրից 90 օր առաջ:

Հոդված 8

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից 30 օր հետո:

Կատարված է Երևան քաղաքում 1993 թվականի մայիսի 19-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և վրացերեն, ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1993 թվականի մայիսի 19-ից: